Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի գործունեության վերաբերյալ

Որպես երկրի տնտեսության առաջատար ճյուղի՝ գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի գործունեությունը նպատակաուղղված է եղել հողօգտագործման ու անասնապահության վարման կատարելագործման արդյունքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացմանը, ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան՝ աշխատանքների կատարմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը:

2014 թվականը գյուղատնտեսության համար ամենահաջողվածներից չէր:

Երկարատև երաշտը և ուժգին կարկտահարությունը մեծ վնաս են հասցրել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններին ու բերքատվությանը, ինչի հետևանքով, նախորդ տարվա համեմատությամբ, գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազել է՝ պայմանավորված բուսաբուծության համախառն արտադրանքի նվազմամբ: Սակայն, չնայած վերջին հանգամանքին, դրամ-դոլար փոխարժեքի տարեվերջին արձանագրված տատանումների պարագայում նույնիսկ, հաջողվել է կանխել պարենային ապահովության տեսանկյունից առաջնային պարենամթերք հանդիսացող հացահատիկի դեֆիցիտի առաջացումը՝ շնորհիվ անհրաժեշտ քանակությամբ տեղական հումքի մթերման:

Այդուհանդերձ, հաշվետու տարում իրագործվել են նախանշված բոլոր ծրագրերը և միջոցառումները, որի համար 2014 թվականին պետբյուջեից ոլորտին հատկացվել էր 3.18 մլրդ դրամ:

Հաշվետու տարում շարունակվել են բուսաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերը (սերմնաբուծության և սերմնարտադրության, սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների, սև ցելի մշակության, բույսերի պաշտպանության և այլն):

Սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի իրագործման արդյունքում, հաշվետու տարում, հաջողվել է արտադրել 581.5 տոննա հավաստագրված աշնանացան հացահատիկի սերմ: Վերջինս սուբսիդավորված գներով՝ 220 դրամ/կգ-ով (սուբսիդավորման չափը կազմել է 50 դրամ/կգ) տրամադրվել է հողօգտագործողներին, ինչը հանդիսանում է երաշխավորված բերքի ապահովման կարևոր նախադրյալներից մեկը:

Հանրապետությունում կայուն բուսասանիտարական վիճակի ստեղծման նպատակով շուրջ 66.2 հազար հա-ի վրա կատարվել են հողերի դաշտային հետազոտություններ և ցանքսերի բուսասանիտարական վիճակի ուսումնասիրություններ:

Հաշվետու տարում հաջողվել է արդյունավետ պայքար կազմակերպել տարիներ շարունակ թթայգիներին մեծ վնաս հասցնող <թթենու վահանակիր> վնասատուի դեմ, ինչի արդյունքում հաջողվել է իջեցնել թթայգիների վարակվածության աստիճանը՝ հասցնելով մինչև տնտեսական վնասաբերության շեմը չգերազանցող մակարդակի, նվազեցվել է վարակի տարածման արեալը, կանխվել թթայգիների չորացման վտանգը:

2014 թվականին իրագործվել են նաև Հադրութի շրջանի Ուխտաձորի և Տողի, Ասկերանի շրջանի Խրամորթի, Մարտունու շրջանի Վերին ենթաշրջանների գյուղատնտեսության զարգացման ծրագրերը, որոնց շրջանակներում իրականացվել են ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ

գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնող ենթակառուցվածքների բարելավման միջոցառումներ:

Այսպես ոռոգման համակարգի բարելավման նպատակով Հաղրութի շրջանի Ծակուռի համայնքում փորվել է նոր արտեզյան ջրհոր, Թաղուտ համայնքում կառուցվել է ինքնահոս ոռոգման ցանց (արտեզյան ջրհորի փոխարեն), Ուխտաձոր համայնքում վերանորոգվել է ջրավազան, իսկ Ջրակուս, Մարիամաձոր և Քյուրաթաղ համայնքներում տեղադրվել են չաներ ու ջրատար խողովակներ, ինչը հնարավորություն է տալու նշված համայնքներում ոռոգովի դարձնել, ընդհանուր առմամբ, 36.0 հա տարածք, այդ թվում՝ 12.0 հա պտղատու այգի և 24.0 հա բանջարանոց:

Ընդհանուր առմամբ, 463.0 հա բազմամյա կերային խոտաբույսերի մշակության համար տրամադրվել են անհրաժեշտ քանակությամբ սերմացու և դիզվառելիք: Այս միջոցառումը նախադրյալներ է ստեղծում ենթաշրջաններում անասունների կերային բազայի ամրապնդման համար: Ակնկալվում է, որ բերքատու շրջանում նշված տարածքից կստացվի ավելի քան 2.3 հազար տոննա համախառն բերք՝ խոտի տեսքով:

Բացի վերոնշյալից, ենթաշրջաններում իրականացվել են նաև պտղատու այգիների հիմնադրման (ընդհանուր առմամբ, ձեռք է բերվել 5335 հատ տնկի), դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման և այլ միջոցառումներ:

Համաձայն օպերատիվ տվյալների, 2014 թվականին հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ընդհանուր մակերեսը կազմել է 66757.6 հա՝ նախորդ տարվա համեմատությամբ ավելանալով 1826.1 հա-ով կամ շուրջ 3.0 տոկոսով, ընդ որում, ընդհանուր ցանքատարածքներում գարնանացանի տեսակարար կշիռը կազմել է ավելի քան 23.0 տոկոս, ինչը ցանքատարածքների կառուցվածքում աշնանացան-գարնանացան հարաբերակցության կարգավորման նպատակաուղղված քաղաքականության արդյունք է: Այստեղ հարկ է ընդգծել, որ գարնանացանի տարածքների ավելացումը մեծապես պայմանավորված է ոռոգովի տարածքների առկայությամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2013թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ	2014թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ
Ընդամենը	***64931.5***	***100.0***	***66757.6***	***100.0***
Աշնանացան մշակաբույսեր	49436.7	76.1	51339.0	76.9
Գարնանացան մշակաբույսեր	15494.8	23.9	15418.6	23.1

Հաշվետու տարում շարունակվել են պետական աջակցության շրջանակներում սերմերի, պարարտանյութերի, թունանյութերի արժեքների մասնակի սուբսիդավորման և հողօգտագործողներին մատչելի պայմաններով տրամադրման աշխատանքները:

Ըստ օպերատիվ տվյալների, 2014 թվականին ցանքատարածքների գերակշռող մասը՝ 62446.5 հա-ը (93.5 տոկոսը), կազմել են հացահատիկային մշակաբույսերի տարածքները: Նախորդ տարվա համեմատ, հացահատիկայինների ցանքատարածքներն ընդլայնվել են 2299.4 հա-ով կամ 3.8 տոկոսով:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

/հեկտար/

	2013թ.	2014թ.	Աճի տեմպը, %
Հացահատիկային մշակաբույսեր	**60147.1**	**62446.5**	**103.8**
ցորեն	28637.8	30318.9	105.9
գարի	22218.9	24340.2	109.5
հաճար	2169.1	2370.8	109.3
եգիպտացորեն	7121.3	5416.6	76.0

Ինչպես նախորդ տարիներին, 2014 թվականին ևս հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքն անկորուստ կազմակերպելու նպատակով ստեղծվել է հանրապետական օպերատիվ շտաբ: Վերջինիս կողմից իրականացված կազմակերպված ու արդյունավետ աշխատանքի վառ ապացույցն այն է, որ բերքահավաքի ընթացքում հաջողվել է զերծ մնալ արտակարգ պատահարներից, բացառությամբ՝ Հադրութի շրջանում գրանցված 1 դեպքի, որի հետևանքով այրվել է 1.0 հա գարու ցանքատարածք:

Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքներում ընդգրկվել է 235 միավոր կոմբայն, այդ թվում 65 միավոր՝ ներգրավված ՀՀ-ից:

Հանրապետությունում ցանված հացահատիկային մշակաբույսերի 62446.5 հա տարածքներից, ըստ օպերատիվ տվյալների, փաստացի հնձվել է 52959.6 հա, հավաքվել է 55579.4 տոննա հացահատիկ, միջին բերքատվությունը կազմել է 10.5 ց/հա:

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Շրջանի անվանումը	Ցանված տարածքը (հա)			Հավաքվել է փաստացի (հա)			Կալսվել է (տ)			Բերքատվությունը (ց/հա)	
	2013թ.	2014թ.	2014թ-ը 2013թ-ի նկատմամբ, %-ով	2013թ.	2014թ.	2014թ-ը 2013թ-ի նկատմամբ, %-ով	2013թ.	2014թ.	2014թ-ը 2013թ-ի նկատմամբ, %-ով	2013թ.	2014թ.
Ասկերան	12667.4	12946.1	102.2	11489.6	10478.7	91.2	26595.4	15408.3	57.9	23.1	14.7
Հադրութ	8715.0	10714.5	122.9	8675.0	8499.5	98.0	19763.5	7929.0	40.1	22.8	9.3
Մարտակերտ	5837.5	5639.4	96.6	4418.3	4016.6	90.9	6127.8	4237.7	69.2	13.9	10.6
Մարտունի	14275.3	15011.6	105.2	12939.5	12427.2	96.0	22447.0	9795.0	43.6	17.3	7.9
Շահումյան	152.0	137.9	90.7	152.0	131.7	86.6	217.5	161.0	74.0	14.3	12.2
Շուշի	144.4	166.0	115.0	144.4	156.0	108.0	289.2	198.9	68.8	20.0	12.8
Քաշաթաղ	18355.5	17831.0	97.1	15211.0	17249.9	113.4	23776.3	17849.5	75.1	15.6	10.3
Ընդամենը	***60147.1***	***62446.5***	***103.8***	***53029.8***	***52959.6***	***99.9***	***99216.7***	***55579.4***	***56.0***	***18.7***	***10.5***

Ընդհանուր առմամբ, հնձվել է 26952.7 հա ցորեն, 20675.0 հա գարի, 2246.9 հա հաճար և 3085.0 հա եգիպտացորեն: Կալսվել է 30509.3 տոննա ցորեն, 17461.5 տոննա գարի, 2678.9 տոննա հաճար և

4929.7 տոննա եգիպտացորեն: Հացահատիկայինների միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 11.3, 8.4, 11.9 և 16.0 ց/հա:

Բացի այդ, եգիպտացորենի տակ ցանված տարածքներից 871.1 հա հնձվել է սիլոսի համար, հավաքվել է 4761.0 տոննա բերք, միջին բերքատվությունը կազմել է 54.7 ց/հա:

ՑՈՐԵՆԻ, ԳԱՐՈՒ, ՀԱՃԱՐԻ ՈՒ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Ցորեն			Գարի			Հաճար			Եգիպտացորեն		
	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվություն-յունը (ց/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվություն-յունը (ց/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվություն-յունը (ց/հա)	Հավաքվել է փաստացի (հա)	Կալսվել է (տ)	Բերքատվություն-յունը (ց/հա)
Ասկերան	6151.6	9842.5	16.0	1980.5	1886.3	9.5	669.3	769.0	11.5	1677.3	2910.5	17.4
Հադրութ	3563.0	3512.0	9.9	4800.0	3960.0	8.3	11.5	11.5	10.0	125.0	445.5	35.6
Մարտակերտ	2107.5	2250.1	10.7	823.8	702.9	8.5	215.5	245.7	11.4	869.8	1039.0	11.9
Մարտունի	9055.6	7255.8	8.0	3061.3	2216.8	7.2	86.6	60.4	7.0	223.7	262.0	11.7
Շահումյան	72.0	73.5	10.2	36.4	20.5	5.6	3.0	6.0	20.0	20.3	61.0	30.0
Շուշի	64.0	106.4	16.6	4.0	4.0	10.0	53.0	79.5	15.0	35.0	9.0	2.6
Քաշաթաղ	5939.0	7469.0	12.6	9969.0	8671.0	8.7	1208.0	1506.8	12.5	133.9	202.7	15.1
Ընդամենը	***26952.7***	***30509.3***	***11.3***	***20675.0***	***17461.5***	***8.4***	***2246.9***	***2678.9***	***11.9***	***3085.0***	***4929.7***	***16.0***

Ըստ ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության տվյալների, 2014 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսներին (բերքահավաքի մեկնարկից սկսած ժամանակահատվածում) ԼՂՀ տարածքից արտահանվել է 9107.1 տոննա հացահատիկ: Արդյունքում, տարեվերջին հանրապետությունում հացահատիկի մնացորդը կազմել է 46471.3 տոննա՝ նախորդ տարվա 83110.8-ի դիմաց:

ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԻ ՇԱՐԺԸ

/տոննա/

Մշակաբույսի անվանումը	Արտադրվել է		2014թ-ը 2013թ-ի Նկատմամբ, %	Արտահանվել է		2014թ-ը 2013թ-ի Նկատմամբ, %	այդ թվում՝ բերքահավաքի մեկնարկից		2014թ-ը 2013թ-ի Նկատմամբ, %	Մնացորդը		2014թ-ը 2013թ-ի Նկատմամբ, %
	առ 30.12.2013թ.	առ 30.12.2014թ.		2013թ. (հունվար-դեկտեմբեր)	2014թ. (հունվար-դեկտեմբեր)		2013թ. (հունիս-դեկտեմբեր)	2014թ. (հունիս-դեկտեմբեր)		2013թ. /11=2-8/	2014թ. /12=3-9/	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*
Ցորեն (հաճար)	49884,1	33188,2	66,5	3950,4	3405,8	86,2	3905,4	2947,6	75,5	45978,7	30240,6	65,8
Գարի	28474,5	17461,5	61,3	4722,9	4164,4	88,2	4645,9	3528,6	76,0	23828,6	13932,9	58,5
Եգիպատոցրեն	20858,1	4928,7	23,6	7696,9	4051,9	52,6	7554,6	2630,9	34,8	13303,5	2297,8	17,3
Ընդամենը	***99216,7***	***55578,4***	***56,0***	***16370,2***	***11622,1***	***71,0***	***16105,9***	***9107,1***	***56,5***	***83110,8***	***46471,3***	***55,9***

Ինչպես արդեն նշվել է, 2014 թվականի աննախադեպ բնական աղետները զգալի վնաս են հասցրել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններին՝ բացասաբար անդրադառնալով բերքատվության ու համախառն բերքի վրա:

Հանրապետության շրջաններում ցանքատարածքները գրեթե ամբողջությամբ տուժել են երաշտից, ավելի քան 7.1 հազար հա հացահատիկի ցանքատարածքներից բերք չի հավաքվել, որից շուրջ 3.3 հազար հա-ը տուժել է կարկտահարությունից և սելավներից:

Հաշվի առնելով բնական աղետների պատճառած վնասի հետևանքները, հողօգտագործողների սոցիալ-տնտեսական վիճակը, նաև այն հանգամանքը, որ ոլորտում չի գործում ապահովագրության համակարգը, ԼՂՀ կառավարությունն ընդունել է աջակցության մեծ փաթեթ, որով՝

- ԼՂՀ համայնքների վարչական սահմաններում կարկտահարությունից լրիվ ոչնչացած գարնանացան մշակաբույսերի ցանքատերերին յուրաքանչյուր հեկտարի դիմաց միանվագ տրամադրվել է 40.0 հազար դրամ՝ տուժած տարածքներում սև ցել կատարելու պայմանով, իսկ կրկնացանք կատարել ցանկացողներին անհատույց տրամադրվել է եգիպտացորենի սերմացու;

- ԼՂՀ համայնքների վարչական սահմաններում գտնվող աշնանացան մշակաբույսերի հողատարածքների 1 տարվա հողի հարկի և վարձակալության դիմաց հաշվարկվող և համայնքների բյուջե վճարման ենթակա տարեկան գումարները վճարվել են ԼՂՀ պետական բյուջեի հաշվին;

- ԼՂՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողատարածքների աշնանացան հացահատիկ մշակող հողօգտագործողներն ազատվել են հողերի վարձակալության դիմաց հաշվարկվող և պետական բյուջե վճարման ենթակա 1 տարվա վարձավճարից;

- հանրապետության Ասկերանի, Հադրութի և Մարտունու շրջաններում կարկտահարությունից 50 և ավելի տոկոսով ոչնչացած աշնանացան և գարնանացան մշակաբույսերի ցանքատերերին յուրաքանչյուր հա-ի դիմաց անհատույց տրամադրվել է 150 կգ-ի չափով գարի, ընդհանուր առմամբ՝ 292.4 տոննա;

- բնական աղետներից 100 տոկոսով տուժած խաղողայգիների տերերին յուրաքանչյուր հեկտարի դիմաց միանվագ տրամադրվել է 100.0 հազար դրամ, ընդհանուր առմամբ՝ 10791.0 հազար դրամ:

Բացի այդ, 2015 թվականի բերքի տակ աշնանացանի իրականացման համար հողօգտագործողներին, որպես պետական աջակցություն, սուբսիդավորված գներով տրամադրվել է ավելի քան 1550.0 տոննա դիզելային վառելիք, ինչպես նաև՝ իրականացվել է արտոնյալ վարկավորում:

Արդյունքում, նախարարության օպերատիվ տվյալների համաձայն, 2015 թվականի բերքի տակ հանրապետությունում կատարվել է 43020.3 հա հերկ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ պակաս է 11433.5 հա-ով կամ 21.0 տոկոսով, որից 10667.4 հա՝ սեփականաշնորհված, 13977.0 հա՝ համայնքի սեփականություն հանդիսացող և 18375.9 հա՝ պետական պահուստային ֆոնդի հողերում:

Ցանվել է 39349.0 հա աշնանացան հացահատիկ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 8963.6 հա-ով կամ 18.6 տոկոսով:

2014 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՐԿԻ ԵՎ ՑԱՆՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ
ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

/հեկտար/

Շրջանի անվանումը	Կատարվել է հերկ			Ցանվել է հացահատիկ		
	առ 20.01.2014թ.	առ 19.01.2015թ.	%-ով նախորդի նկատմամբ	առ 20.01.2014թ.	առ 19.01.2015թ.	%-ով նախորդի նկատմամբ
Ասկերան	11453.2	9189.3	80.2	9497.9	8298.3	87.4
Հադրութ	10687.0	8450.0	79.1	9700.0	8000.0	82.5
Մարտակերտ	4449.6	3343.0	75.1	4075.0	2983.2	73.2
Մարտունի	14961.0	11161.0	74.6	13821.1	9498.5	68.7
Շահումյան	119.0	22.0	18.5	114.6	13.0	11.3
Շուշի	99.0	180.0	181.8	64.0	156.0	243.8
Քաշաթաղ	12685.0	10675.0	84.2	11040.0	10400.0	94.2
Ընդամենը	***54453.8***	***43020.3***	***79.0***	***48312.6***	***39349.0***	***81.4***

2014 թվականի բերքի տակ ցանված 830.4 հա արևածաղկի ցանքատարածքներից հնձվել է 678.2 հա, հավաքվել է 1022.5 տոննա արևածաղիկ հատիկի և 300.0 տոննա՝ սիլոսի համար, միջին բերքատվությունը կազմել է, համապատասխանաբար, 15.5 և 150.0 գ/հա:

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ
ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Ցանված տարածքը (հա)	Հնձվել է (հա)		Հավաքվել է (տոննա)		Բերքատվությունը (գ/հա)	
		հատիկի համար	սիլոսի համար	հատիկի համար	սիլոսի համար	հատիկի համար	սիլոսի համար
Ասկերան	216.2	187.0	20.0	351.2	300.0	18.8	150.0
Հադրութ	200.0	200.0		400.0		20.0	
Մարտակերտ	133.0						
Մարտունի	281.0	271.0		271.0		10.0	
Քաշաթաղ	0.2	0.2		0.3		15.0	
Ընդամենը	***830.4***	***658.2***	***20.0***	***1022.5***	***300.0***	***15.5***	***150.0***

Հաշվետու տարում հանրապետությունում առկա 2072.9 հա խաղողայգիներից հավաքվել է 1533.3 հա տարածք, համախառն բերքը կազմել է 4911.6 տոննա, միջին բերքատվությունը՝ 32.0 գ/հա:

ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ
ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

Շրջանի անվանումը	Հավաքվել է (հա)		Համախառն բերքը (տոննա)		Բերքատվությունը (գ/հա)	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
Ասկերան	158.4	154.8	1108.3	773.6	70.0	50.0
Հադրութ	272.0	230.0	955.0	529.0	35.1	23.0
Մարտակերտ	73.0	38.0	458.4	159.0	62.8	41.8
Մարտունի	1164.9	998.5	9733.5	2803.0	83.6	28.1
Շահումյան	4.0		9.2		23.0	
Քաշաթաղ	92.0	112.0	220.8	647.0	24.0	57.8
Ընդամենը	***1764.3***	***1533.3***	***12485.2***	***4911.6***	***70.8***	***32.0***

Վերջին տարիներին լուրջ ներդրումներ են իրականացվում ծխախոտի մշակության զարգացման բնագավառում:

2014 թվականին ընկերությունը շարունակել է աջակցել Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների հողօգտագործողներին, ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան, ծխախոտի մշակության աշխատանքները կազմակերպելու հարցում:

Հաշվետու տարում հանրապետությունում 86.0 հա-ի վրա կատարվել է ծխախոտի մշակություն, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 31.5 հա-ով կամ 36.6 տոկոսով:

Նախորդ տարվա համեմատությամբ, 2014 թվականին ծխախոտի համախառն բերքն ավելացել է 57.0 տոննայով կամ 7.4 տոկոսով՝ պայմանավորված հիմնականում ցանքատարածքների ընդայնմամբ:

ԾԽԱԽՈՏԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

	Ասկերան		Մարտակերտ		Մարտունի		***Ընդամենը***	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	***2013թ.***	***2014թ.***
Ցանվել է (հա)	15.5	18.2	5.0	12.0	34.0	55.8	***54.5***	***86.0***
Հավաքվել է (հա)	15.5	18.2	5.0	12.0	34.0	55.8	***54.5***	***86.0***
Համախառն բերքը (տոննա)	130.0	139.0	41.0	29.0	600.0	660.0	***771.0***	***828.0***
Բերքատվությունը (գ/հա)	83.9	76.4	82.0	24.2	176.5	118.3	***141.5***	***96.3***

Կարևորելով գյուղատնտեսության ճյուղերի համաչափ զարգացումը, հետևողական քայլեր են ձեռնարկվում նաև անասնաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացման համար:

Ի տարբերություն բուսաբուծության, հաշվետու տարում անասնաբուծության ճյուղում արձանագրվել է համախառն արտադրանքի աճ:

Այսպես, 2014 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել են մսի, կաթի և ձվի արտադրության ծավալները, համապատասխանաբար, 20.2, 9.3 և 9.0 տոկոսով (2014 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին արտադրվել է 5362.4 տոննա միս, 37500.7 տոննա կաթ և 26202.8 հազար հատ ձու):

ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

	2013թ. հունվար-նոյեմբեր	2014թ. հունվար-նոյեմբեր	Աճի տեմպը (տոկոս)
Միս (կենդանի քաշով), *տոննա*	4461.4	5362.4	120.2
Կաթ, *տոննա*	34318.7	37500.7	109.3
Ձու, *հազ. հատ*	24041.4	26202.8	109.0

2014 թվականին շարունակվել են գյուղատնտեսական կենդանիների տոհմային ու մթերատու հատկանիշների բարելավման, անասնաբուծության ճյուղի վարկավորման ծրագրերը, ինչպես նաև սեմինարների հրավիրման և ֆերմերներին մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները:

Տեղական անասնագլխաքանակի տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման նպատակով, 2014 թվականից սկսել է գործել տոհմային ցուլերի տրամադրման ծրագիրը, որի շրջանակում տոհմային տնտեսություններից հանրապետության ֆերմերներին արտոնյալ պայմաններով տրամադրվել է 117 գլուխ տոհմային անասուն:

Հաշվետու ժամանակաշրջանում իրագործվել է նաև կենդանիների արհեստական սերմնավորման ծրագիրը, որի նպատակն է տեղական նախրի բարելավումը: Ծրագրի շրջանակում իրականացվել է 257 գլխի արհեստական սերմնավորում:

Հաշվետու տարվա կարևոր ձեռքբերումներից մեկն էլ այն է, որ իրականացված անասնաբուժասանիտարական միջոցառումների շնորհիվ հաջողվել է հանրապետությունում պահպանել անասնահամաճարակային կայուն իրավիճակ, բացառությամբ՝ բրուցելյոզ և <աֆրիկական ժանտախտ> հիվանդությունների առանձին դեպքերի:

Նշված տարում հանրապետությունում արձանագրվել են խոզերի <աֆրիկական ժանտախտ> հիվանդության դեպքեր: Հիվանդության հետագա տարածումը կանխարգելելու նպատակով սատկած և անարյուն եղանակով ոչնչացված խոզերը հորվել են անասնագերեզմանոցներում, իսկ խոզաբուծությամբ զբաղվող անհատներին հանձնարարվել է սահմանել խոզերի փակ, մեկուսացված պահվածք: Նշված հիվանդությունից, ընդհանուր առմամբ, սատկել և անարյուն եղանակով ոչնչացվել է 431 գլուխ խոզ՝ 2013 թվականի համեմատությամբ նվազելով 4.6 անգամ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

/գլուխ/

Շրջանի անվանումը	ԽԵԱ			այդ թվում՝ կովեր			Խոզեր			ՄԵԱ			Թռչուններ		
	առ 01.01.2014թ.	առ 01.01.2015թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2014թ.	առ 01.01.2015թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2014թ.	առ 01.01.2015թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2014թ.	առ 01.01.2015թ.	Աճի տեմպը, %	առ 01.01.2014թ.	առ 01.01.2015թ.	Աճի տեմպը, %
Ստեփանակերտ	670	730	109.0	170	130	76.5	980	1320	134.7	680	550	80.9	40250	22000	54.7
Ասկերան	11312	10943	96.7	4580	4074	89.0	3369	2822	83.8	22000	22189	100.9	70826	65435	92.4
Հադրութ	7761	7892	101.7	3148	3084	98.0	3239	2337	72.2	19463	27090	139.2	43600	43856	100.6
Մարտակերտ	10782	10214	94.7	4716	4524	95.9	1581	1257	79.5	15140	15214	100.5	53973	48433	89.7
Մարտունի	10904	9828	90.1	4614	4064	88.1	3827	2401	62.7	13806	13011	94.2	112300	118050	105.1
Շահումյան	3361	4156	123.7	1383	1811	130.9	430	744	173.0	1638	1810	110.5	5089	8149	160.1
Շուշի	1002	924	92.2	392	393	100.3	183	213	116.4	1007	813	99.6	4047	3705	91.5
Քաշաթաղ	12102	13311	110.0	4979	5231	105.1	3085	2154	69.8	33561	35512	105.8	17822	20072	112.6
Ընդամենը	***57894***	***57998***	***100.2***	***23982***	***23311***	***97.2***	***16694***	***13248***	***79.4***	***107295***	***116189***	***108.3***	***347907***	***329700***	***94.8***

Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների վարակիչ հիվանդությունների նկատմամբ, հաշվետու տարում, իրականացվել է շուրջ 1.5 մլն կանխարգելիչ սրսկում, լաբորատոր քննության է ենթարկվել արյան 122093 նմուշ, որից բրուցելյոզով հիվանդներ՝ 600 նմուշ (0.5 տոկոս): Նախորդ տարվա համեմատությամբ, կենդանիների հիվանդացածությունը նվազել է 0.3 տոկոսային կետով:

Ինչպես հայտնի է, գյուղատնտեսական մթերքների վերամշակման զարգացած արդյունաբերությունը և իրացման կայուն համակարգը գյուղատնտեսության արդյունավետության ապահովման կարևորագույն նախապայմաններից են:

2014 թվականին վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 902.1 տոննա պտուղ-բանջարեղեն, ինչը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը շուրջ 28.0 տոկոսով: Բացի այդ, ընդլայնվել է նաև մթերվող հումքի տեսականին. մթերվել է շուրջ 40 անուն հումքատեսակ:

Հաշվետու տարում կաթ վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 2871.0 տոննա կաթ, ինչը գերազանցել է նախորդ տարվա ծավալը 30.6 տոկոսով:

Իրականացված մթերումների արդյունքում, 2013 թվականի համեմատությամբ, 5.0-20.0 տոկոսով ավելացել է տարբեր կաթնամթերքների, իսկ շուրջ 19.0 տոկոսով՝ պահածոների արտադրության ծավալները:

Հաշվետու տարում շարունակվել են գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի հետևողական թարմացման ու վերազինման աշխատանքները. ձեռք է բերվել 84 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 72 միավոր անիվավոր տրակտոր և 12 միավոր կցասայլ:

Արդյունքում, 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում առկա գյուղտեխնիկայի քանակը կազմել է 2081 միավոր, այդ թվում՝ 317 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 915 միավոր անիվավոր և 736 միավոր թրթուրավոր տրակտոր, 11 միավոր սիլոսահավաք կոմբայն, 12 միավոր խոտհնձիչ և այլն: Բացի այդ, առկա է նաև 1621 միավոր սարքավորում:

Կարևորելով բնակչության կողմից որակյալ և անվտանգ սննդամթերքի սպառման, ինչպես նաև տեղական արտադրության արտահանման խթանման խնդիրները, 2014 թվականի սկզբին ստեղծվել է <Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն>-ը:

2014 թվականը հիշյալ կառույցի համար հանդիսացել է կայացման, ուսումնասիրությունների, դիտարկումների տարի:

Այդուհանդերձ, օպերատիվ դիտարկումների, տնտեսվարողներին համապատասխան իրավաօրենսդրական ակտերի ծանոթացման և զգուշացման կառավարման գործիքի օգտագործման արդյունքում հանրապետության կաթնամթերքի, հացի և հրուշակեղենի արտադրություններում վերացվել են մի շարք թերություններ և կատարվել բարեփոխումներ:

Ծառայության տեսչական օպերատիվ դիտարկումների շնորհիվ 2014 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսներին հանրապետությունում ոչնչացվել կամ օգտահանման նպատակով վաճառքի շուկայից հանվել են հետևյալ ապրանքատեսակները. 1.45 տոննա կաթնամթերք, 1.3 տոննա մսամթերք, 32.0 կգ ձկնամթերք, 6.9 հազար հատ ձու, 769 լ հյութ, 1529 փաթեթ տարբեր տեսակի ապրանքատեսակներ:

2014 թվականին հանրապետությունում հերթական անգամ նշվել է գյուղատնտեսության աշխատողի մասնագիտական տոնը, իսկ ոլորտի մի շարք ներկայացուցիչներ ԼՂՀ Նախագահի կողմից արժանացել են բարձր պարգևների:

Հարկ է նշել, որ հանրապետության մի շարք տնտեսվարող սուբյեկտներ նախարարության աջակցությամբ հնարավորություն են ունեցել մասնակցել Երևանում կազմակերպված <Արմպրոդէքսպո> ցուցահանդեսին ու <Հայագրոֆորում> համաժողովին:

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունը շարունակել է համագործակցությունն ինչպես Հայաստանի Հանրապետության համանուն կառույցի, այնպես էլ արտասահմանյան տարբեր կազմակերպությունների հետ:

Նշենք նաև, որ ԼՂՀ գյուղնախարարությունն իր պաշտոնական կայքէջի և հանրապետության առաջատար լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության միջոցով պարբերաբար

լուսաբանել է ոլորտում իրականացվող տարբեր աշխատանքները, նախարարության ու նրա ենթակայության ներքո գործող կազմակերպությունների գործունեությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ագրարային ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը հետևողական կատարելագործելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Նախարարությանը վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով 2014 թվականին մշակվել և ընդունվել է ավելի քան հինգ տասնյակ իրավական ակտ, այդ թվում՝ հինգ օրինագիծ, ԼՂՀ կառավարության որոշման քառասունհինգ նախագիծ, հինգ գերատեսչական նորմատիվ ակտ: Մասնավորապես՝ հավանության է արժանացել <ԼՂՀ գյուղատնտեսության սուբսիդավորման հայեցակարգը> և մշակվել են նրանից բխող մի շարք ծրագրեր:

Գյուղատնտեսությունը շարունակելու է իր ռազմավարական գործունեությունն իրականացնել նաև 2015 թվականին: Այդ նպատակով ոլորտին հատկացվել է 3.6 մլրդ դրամ, որը կուղղվի նախորդ տարիներին սկսված մի շարք ծրագրերի և միջոցառումների իրագործմանը, ինչպես նաև նոր՝ կերարտադրության և անասնաբուծության զարգացման, մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման ծրագրերի իրականացմանը: